

ԳԱՐՈՒԱ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԻ ԲՈՐՅԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ, ԲԱՆԱՒԹՅԱՆ, ԵՒ ԱՅԵՒՏՐԱԿԱՆ

ՇՐՋԱՆ ՎԵ ՑԱՄՈՒՆԻՑ

Ա. ՏԱՐԻ. Ա. ՇՐՋԱՆ

1862

ԹԻՒ 9. ՅՈՒՆԻՍ 5

Հրատարակի տմիոց երկու տնտես .
Վեցամսեայ գինն է 8 դրամք .
Խցմբին դրա բանքու ծափքը միա .
աեց 9 դրամք .
Ստորագրութիւնները շրջանին սկիցքեն
կցսկին .
Հանդեսին ու ցցուած տնյնար նամակ
կամ ճրար չընդունուիր .

Խորագրութեան տեղերն են .
իցիք՝ ծագիկի գրուանեակը , կի-
րիտ խան , թիւ 3 .
Կոցի ս , մեծարգոյ լո . թ . Գա-
շենակը բանին սենեակը Պաշցք դաշար
կամուրջին գցուից .

Հաջեյ , մեծարգոյ Յ . Ս . Քիւրքեա-
նօֆ :
Փարիզ , M. A. Mourad, Rue du Dra-
gen , 26 .
Մանչէսթեր , D. Ekister, George
Street , 78 .

Բ Ա Ր Ա Յ Ա Կ Ա Ն

Ճշմարիտ Սահմանադրութեան եւ բուն Ազգակցք ո՞յն է :

Եթէ վեր ի վերոյ դիտելու ըլլանք Ազգեր-
նուս մէջ բազմաթիւ Աահմանադրասէրներ և ազգա-
սէրներ կը տեսնենք : Բայց երբ ուշի ուշով և մը-
տադրութեամբ քննելու ելնենք՝ կը տեսնենք որ
շատերը՝ վասն բարեկամութեան և կեղծաւորու-
թեան , ոմանք այլ և այլ կրթերու համար , ոմանք
առ շահի , ոմանք առ ահի և ոմանք իփառս մարդ-
կան Սահմանադրասէր և Ազգասէր կուղենք երեխլ :
Հազուազիւս են Ազգերնուս մէջ Ճշմարիտ Ազգա-
սէրները , իսկ միայն իրենց անձնական շահին ,
անձնական պատույն և անձնական բարեկեցութեան
ետեւ եղողները բազմաթիւ . ասոնք երեք Ազգին
թշուառ վիճակին և չբաւորութեան վրայ աչք չեն
ձգեր , Ազգը ինչ կուղէ թուղ ըլլայ , չողերնին
անդամ չէ :

Կան այնպիսիք ալ որոնք խօսքով Սահմանա-
դրասէր և Ազգասէր են . բերնով մեծ մեծ կը
ջարդեն , ի փառս և ի շահ կամ ի պատիւ Ազգային

Սահմանադրութեան այս ինչ դործը կատարենք ,
յօդուա և ի պայծառութիւն Ազգին՝ այս ինչ ըն-
կերութիւնը հաստատենք , կըսեն , միմայն բերնէ
ելած շունչերու զօրութեամբ . իսկ եթէ դործելու
և յառաջ տանելու կայ դործը՝ (որ էականն է) ,
առաջին անդամ կծիկը դողով իրենք կըլլան :

Վիերան ըլլանք , զիրար սիրենք , Ազգին
համար աշխատինք , Ազգային ազատարար Սահմա-
նադրութիւնը յառաջ տանենք , կը խօսին արդարե
այս կը խօսին . . . բայց միայն խօսելով ըլլար . . .
գործին դալու ըլլայ բանը՝ իսկոյն կը հեռանան կամ
հեռանալու միջոցներ և պատրուակներ կը հնարեն :

Ճշմարիտ Սահմանադրասէր և բուն Ազգասէր
այն մարդն է՝ որ խօսքով ազդային յառաջադիմու-
թեան վրայ խօսեցածները՝ դործքով կատարելու
պատրաստ է : « Աա՝ որ Ազգին և Սահմանադրու-
թեան յառաջադիմութեան համար կաշխատի հոդ-
ով չափ . . . դործունեայ է և ճարպիկ թէ խօսքի
և թէ դործքի մէջ : Ուրիշներուն պէս՝ խօսեցով և
հեռուէն անտարբեր և անհօդ աչուլներով զիտող
չէ : Ուրիշներուն պէս՝ միայն խօսքով գործ տես-
նող չէ : Ումանց պէս՝ բերանը բացած առանց աշ-
խատութեան կերպիւրի սպառով չէ : Ուրիշներուն

թէ Վասուած առաքինի մարդեկը սիրելով և ուղեւ-
լով բարձրացնել զանոնք կատարելութեան ծայրը,
կը թողնու զանոնք որ բաղդին հետ կոռին . բայց
կա չեմ գարմանար , կը հաճի նա երեմ ասանկ
պատերազմներու հանդիսանես ըլլայ , Վասուածոյ
ամենէն քաղցր տիեսարանը և աչքերը գեղ ի ոռն
դարձնելու ամենէն արժանասորը , բաղդին դեմ
մարտնչող և անոր յաղթանակող տոպինի մարդն է :

Քաջանիրաւես , բայց ինչ ապացոյց ունիս
քու քաջութեանցդ , եթէ դիպուած մը տեղի չունե-
ցաւ որ այսպէս երեաս : Ալիմպիական խաղերու
կ'երթաս , բայց յաղթանակող չես կրնար հոչակ-
էիլ եթէ ընդդիմամարտ չունենաս . ասանկ է նաև
առաքինի հոգւոյ համար , որու գեռ չպատահեցաւ
գէպք մը իր առաքինութիւնը ցուցնելու : Պատե-
րազմականք կը պարծենան թէ վերքեր առին ու զա-
նոնք ցուցընելու իրենց պատիւ կը համարին : Պա-
տերազմական հարուածներէ թափուած արիւնը քա-
ջութեան ուրախութիւն կը շնչէ անոնց ներսը :
Երբոր պատերազմէն գառնան , ուր ամենքը քաջա-
պէս կուռեցան , վերաւորեալները աւելի հանդիսա-
կանաց աչքը իրենց վրայ կը դարձնեն , քան թէ
չվերաւորուղները :

Ուրեմն ինչպէս ապահով ըլլայ թէ քաջապէս
պիտի համբերս աղքատութեան՝ երբոր անբաւ
հարստութեան մէջ կը զանուիս . կամ թէ շատ-
անտարերութիւն պիտի , ցուցնես , անարգանաց ,
հայհոյութեանց , հասարակաց ատելութեան դէմ ,
երբ ամենուն ծափահարութիւնը կընդունիս , և ամեն
տեղ ընթացակից կըլլայ քեղ ժողովրդեան կոյր սէ-
րը . Պիերձաբան ես երբ հարկ ըլլայ ուրիշները
միմիարելու , բայց աւելի պիտի զարմանային քու
վրագ , թէ որ գուն մի և նոյն աշետից մէջ զանը-
ւելով , քու ցաւդ գուն անձամբ սանձէ իր :

Վասուած մեր հայրն է անոր կը վերաբերի ու
կը վերջանայ ամեն մարդկան աղդաբանութիւնը :
Պէտք չէ անարդենք և ու մէկը , թէ և անշան ու
աղքատ ցեղէ ըլլայ : Բաղդովի եղած բարիքները
Ճշմարիտ համարում չեն ստացներ՝ այլ բարը .
բարը մեղմէ կախեալ է , իսկ հարստութիւնն ու
արժանաւութիւնը բաղդէն :

Կը համոզուիմ հաճութեամբ անանկ մեծ մար-
դոց կարծեացը , որոնք հոգւոյ անհահութիւնը կը
սորելեցնեն մեզ : Կը զրկեմ այս յօյաը , և յաւիտե-
նականութիւնը որ քիչ մը ետքը պիտի ընդունիմ ,
անիկայ պաշտել չտար այս մարդնը որ զիս աշխար-
հիս մէջ կ'արդիլ :

Ճիմակութնէ կրնաս ով մարդ , մինչեւ Վասու-
ածութեան աթոռը բարձրանալ , հարստութիւննեւ

թը չեն որ զքենը հօն պիտի բարձրացնեն , վասն զի
Վասուած ուկոյ կամ արծաթոյ պէտք չըւնի , ոչ
համարման , ոչ պայծառութեան , ոչ փառաց , և ոչ
ծառայից բազմութեան , որոնք քու քանցդ կը
վերցնեն քաղաքին մէջ ու գուրս տեղաւանք : Վաս-
ուած Վասուածը ամենակարող է ու միայն ինք կը բ-
րընէ տիեղերը : Ի՞նչ բան է ուրեմն զքենը հօն
բարձրացնողը , քու հոգիդ , թէ որ ըլլայ մաքուր ,
բարեգործ , և ասաքինի :

Մարդուս բարիքը միայն առաքինութիւնն է .
թէ որ ուրիշ բաներէ զուրկ ալ ըլլայ , ասով միայն
պատույ արժանի է , ընդ հակառակը առանց առա-
քինութեան ամեն ուրիշ բարիք չեն կրնար զմեղ
գատապարտութենէ և անարզանքէ սպահանել :

Վասաքինի մարդը միշտ իր աչցաց առջեւը ունի
այս հին արժանաւորութիւնը թէ “պէտք է հընա-
զանդինք Վասուածոյ ու : Տիեղերը , որու մէջ կը
ծնանինք միապետական տէրութիւն է , մեր աղատու-
թիւնը տիեղերաց միապետին Վասուածոյ հպատակու-
թենէն կախեալ է :

Երիտասարդք մանաւանդ պարտաւոր են նուի-
րել զիրենք Ճշմարաւութիւնը ուսանելու , իմաստուն
դրութիւն մի վարուց ունենալ , և առաքինական
զործոց ունակութիւն ստանալ :

Պէտք է մարդուս՝ շատերուն օդտակար ըլլալ
թէ որ կարօլ է , կամ զոնէ իր արեկամներուն ,
աղզականներուն , վերջապէս իր անձին : Վասն մարդ
ամեն քաղաքցի պարտաւոր է հասարակաց ծառա-
յութեան , հասարակաց ծառայութիւնը ուրիշներն
ալ երջանիկ ընել է :

Խամատունները օգտակար եղան իրենց գըր-
ւածներովը , որով կը լուսաւորեն մարդկային սե-
ուր , քան թէ որ ուզէին զօրաց իշխան , մողովը-
գոյ գատաւոր , քաղաքց հիմնոլ ըլլալ , վասն զի
անոնք վարժապետ կըլլան ամեն մարդոց ներկայից
և աղապայից :

Ճերիք է որ բարկացող մէկը տեսնենք , որ
համազուինք թէ մոլեկնեալ է . ասոր աչքերը կայծ
կարձեն , արիւնը վեր ելլելով գէմքը կրակ կը
դարձնէ , աղկունքները կը կծկին , ակոաները կը
կոճաէ , մազերը կը ցցուին , կը հեւայ , կը գող-
դը զայ , ձայնը կընդհատի , ոտքերով զեաինը կը
զարնէ . ասոնք ուրիշ ինչ կը ցուցնեն եթէ ոչ ա-
տելի ախա մը անհաճոյ դիմաց : Թաէ որ ըսէ մէկը ,
թէ անկարելի է աղատիլ . բարկութեան կիրքէն և
այսպիսի յաղթութիւնը մարդկային բնութենէն
վեր է , կը պատախանեմ անոր թէ չկայ ախտ մը
այնքան անսանձելի . որ մարդս չկրնայ նուածել
զան : Մարդուս բանականութիւնը ինչ որ ուզէ

կարող է, կը տեսնենք մարդիկ որ ՚ի բաց կը թա-
զուն դինեմոլութիւնը և ուրիշ հեշտութիւնները :
Ուրեմն մեզի պէտք է համբերութիւն ունենալ,
որուն փոխարէնը աշխարհիս մեծադոյն բարիքն է,
սրտի հանդարտութիւնը կըսեմ և հոգւոյ կատա-
րեալ անդորրութիւն : Ուեր կիրքերը անբուժելի
չեն, և ո՞չ առաքինութեան ձամբան ունաց կարծա-
ծին չափ գժուար : Ուսումն է մի միայն միջոց, որով
կրնայ մարդ հետի ըլլալ կենաց տառապանքներէն :
Ուսումը չթողւր մեզի՝ որ ո՞չ միայն մեր անձին
ծանրանանք, և ո՞չ այլոց անօգուտ ըլլանք : Ուս-
մամբ կ'արժանանանք իմաստուն և առաքինի մարդոց
հետ կենակցելու անոնց դրսածները կարդալով :

Թարգի ՚ի Յանձնական

Ա. Մաղաք Յուրականեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԴՈՒՄ ՇՈՐԵ ՏԱՐԵԱԾ.

ՏԵՍԱԿԱՆ Ք ԿԵՆԱՑ

Դ. Վերը Երեւակայութեանց .

(ՏԵՇ. ԲԴ- 8. ԵՐԵՄ 61).

Տարիները կը Ճերմըկցընեն այն մաղերը՝ որ
երբ եմն այնչափ փայլուն և սեաւ էին : Տարիները
եռանգնոտ հայեցաւածի շողողալը անհետացնելով՝
այն բուռն արեան եռալը կը հանդարտեցնեն : Ա-
սիկայ մարդկային կենաց վերջեն տեսարանն է,
այսինքն ծերութիւնը, որ ըսել է ձևուը :

Տիգրան մատասուն իւր կրակարանին մերձ
հստած՝ Ձանապարհորդի մը նման իւր օրուան
մէջ քայլած անցած ձամբան կը չափէ, և իւր եր-
կարատե ձամբորդութեան ընթացքին մէջ ձեռք ան-
ցուցած և կորուսած ամեն բաները միտքը բերէ :

Վինչե իւր մանկութեան օրերը կերթայ, և
այն ժամանակ խիսուր և մշամաղձոտ մատքրութեամբ
մի այն տեղ կըսպասէ քիչ մի :

Անհետացաւ զնաց այն մատղաշ, առոյդ և
կայտառ մանկութիւնը, որուն ուրախութիւնը ա-
ռատ էր և իւր արտասուաց մէջ անզամ երջանկու-
թիւն կը զանէր :

Անհետացաւ, այն յոյսերով լի երիտասար-
դութիւնը, որուն մէջ այնչափ համարձակութեամբ՝
փառասիրութեան փարոսէն լուսաւորեալ, իւր
ձամբան յառաջ կը վարէր, ասոր մէջ իւր աշ-
խատութեան ամեն ժամերը՝ իրեն առատ հունձք կը
խոստանային :

Անհետացաւ նաև, Հասուն հասակին այն
հզօր զօրեղութիւնը՝ որուն վրայ հպարտացած՝ կը
սիդար : Խոստացեալ կատարելութեան ամինա-
բարձր աստիճանը կը հասնի այս հասակը, և ծե-
րութեան տկարութիւնը վրան կըզայ :

Տիգրան հիմայ կըսկի իւր ապագային բնա-
կան տեսողութիւնը ժամերով և օրերով հաշուել,
մինչդեռ յառաջ ամիսներով և տարիներով կը հա-
շուէր : Իւր անցեալու իրեն աշուըներէն կանչե-
տանար՝ հեռաւոր հօրիզոնի մը վրայ երևցած զո-
լորշներու նման : Ասդիս անդին իւր սնոտի և
պատիք երևակայութեանց հետքերը միայն կը նըշ-
մարէ, նման այն կտարներուն՝ որոնք ալեկոծու-
թենէ մի կենաց հսանկին մէջ քջուած էին :

Անհետացաւ նաև իւր բարեկամները, իւր
բարերար սիրելիները՝ որոնք ղենքը հաստատուն
բռնած և պաշտպանած էին : Իրարու ետևէ մեռան
անոնք, մինչդեռ ինքը իւր ձամբան կը շարունա-
կէր : Իւր այնչափ անձնանուէր և սիրելի քոյրը
ևս մեռաւ : Իւր հօրը յիշատակը կը պատուէ, և
չիրնար առանց խանդաղատութեան յիշել անոր
ծանր և գթառատ կերպարանքը և համեստ ու բա-
րելի նայուածքը :

Իւր կենաց անցեալին զննութեան մէջ նետ-
ուելով՝ անոր մէջ իւր կատարած պարտաւորու-
թիւններուն յիշատակը անյազութեամբ կը մինտէ :
Ուրախութեամբ պատիս անդին մի քանի բարերա-
րութեան յոյցեր և զթարտութեան գործեր կը
նշմարէ : Բայց ի՞նչ ընդարձակ անջրապետութիւն
այն բարերարութեան մէջ՝ զոր պարտ էր ընել և
զար չըրած էր գեռ : Կենաց այս վերջին շրջանին
մէջ, ո՞չսափ փոքր կերեէր իրեն, բարեղ ործու-
թեանց արժանաւորութիւնը՝ որով պարտաւոր էր
Աստուծոյ բարձրելոյն և յաւիտենական արդարու-
թեան, յաւիտենական բարութեան առջե երեխլ :

Ի վերայ այսր ամենայնի, իւր բոլոր այս սը-
ղոյ և արամութեանց մէջ, Տիգրան՝ իւր քովը ու-
նէր համեստուչի և ազնուուչի Ասպրուչին, որուն
առաքինութիւնները մոռնալու և չշանչնալու չափ
սիալեցաւ իւր փառասէր յուզման մէջ եղած ժա-
մանակ : Ասպրուչին պառաւցեր էր՝ իւր պարտաւո-
րութիւնները կատարելու մէջ միշտ մատքիր եղած :
Ասկաւ առ սակա իւր զեղեցկութեան բոլոր նը-
շանները կորուսած էր : Բայց իւր սիրուը և իւր
էրկանը սիրու երիտասարդութեան հրաւոյրներէն
աշելի գուաւոր կապավ մի վեցած էին իրարու :

Որչափ այս աշխարհի երկակայութիւններէն
հեռանային, միատեղ դէպ ՚ի այն աշխարհը կել-
անէին, որ փենց կեանքին վերջը խոստացուած էր

և որ իրենց յուսոյն կը ժպտէր :
Երթալով Մաքրուհին կը տկարանայ , և յա-
շախ տիրաղին նայուածքով մի և իւր էրկանը
ձեռքը սեղմելով՝ կիմացընէ անոր՝ որ կը պարտա-
ւորի իւր վերջին հրաժեշտին պատրաստուիլ :

Վառուան մէ չ օր մի , մինչդեռ արեգական
Ճառագայթները ծառերուն տերեց վրայ կը ցո-
յանային , մինչդեռ մեղսները ծաղիկներուն չորս
կողմը կը բզզէին և թոշունները զուարթութեամբ
իրենց գայլայլիները կը յօրինէին , և աչա այս
պարկեշտ կինը , ընտանեաց այս կաթողին մայրը ,
իւր մեռելատիս զլուիը անկողնոյն վրայ կը ծոէ :

— Մաքրուհի , Մաքրուհի , կը զուչ ծերը
վշտացին :

Վնգօր և տկար ձեռք մի կերկնցունէ իրեն
Մաքրուհին , ժպտիս 'ի դէմս կը նայի անոր , կօրհ-
նէ զայն՝ որ իւր պաշտպանը և իւր հաւատարիմ
ընկերը եղած էր , կօրհնէ իւր զաւակները՝ որոնք
իրեն ուրախութիւնն եղած էին , յետոյ մեծ հան-
գարառութիւն մի իւր կերպարանիրին վրայ կը տա-
րածուի , վերջին անդամ իւր ամաւսնոյն ձեռքը
կը սեղմէ և վերջին շունչ մի իւր պրկունքներէն
դուրս կելնէ :

Ծերունին առանձին կը մնայ . . . տրամու-
թեան սենեկին մէջ . . . այն առանձին . բայց ոչ :
Վստուածային բարութիւնը ամեն բանէ չզրկած է
զնա : Տիգրան իւր բազուկներով կը շրջապատէ ,
և իւր սրտին վրայ կը սեղմէ մանչ զաւակ մի՝ որուն
արթուն բնութիւնը և զուարթ կերպարանքը՝ իւր
մանկական հասակը կը յիշեցընէին , և երկու աղ-
ջիկներ՝ որոնք իրենց քաղցրութեամբը ու զորուլալի
խանդաղատութեամբը , իրենց մօրը կը նմանէին :

Վյա երեք սիրուն առարկաները՝ իրմէ պիտի
չբաժնուին բնաւ : Իւր որդին , ըստ իւր բաղձա-
նաց , զիւղին մէջ պիտի ամուսնանայ : Իւր աղ-
ջիկները՝ իրենց ամուսիններուն հետ , իւր յար-
կին տակ պիտի մնան : Ծնոտանեկան նորանոր հան-
գէսները իւր միտքը պիտի զուարթացընեն տա-
կաւին , նոր սերունդ մի պիտի կենդանանայ և իւր
աշաց առջե սատուտելով՝ պիտի յառաջ ընթանայ :

Իւր վերջին պահուն՝ իւր երկու աղջիկները
քովը՝ կը զտնուին : Վսոնցմէ մին՝ իւր խարաեաշ
տղեկը բաղկացը մէջ առած՝ Տիգրանին կերկնցու-
նէ : Տղեկին վարդաղ սյն երեսը՝ ծերունիին տըժ-
գոյն այտերուն կը դպչի . և այս՝ ձեռուուան ձիւնին
վրայ՝ զարնանային ծաղիի կը նմանէր կարծես թէ :

Տիգրան սոյն այս զովարար համբուրին տակ՝
իւր աշուշները կը գոցէ : Իւր հոգին դէպ 'ի ու-
ժիւ աշխարհ կը թուչի և իւր այս աշխարհային երե-

ւակայութիւնները կը լմնան :

Ք . Մարմէ .
Թարգ . ի Գուան .



ՀԱՅՈՑԱԽՄԱՆ ԵԽ ՊԵՏԱԿԱՆԱԿԱՆ

Օ . — Ակցաւորութիւնց ի՞նչ բան է .

Օ . — Մի սոսկալի մոլութիւն է կեղծաւո-
րութիւնը : Իսկ կեղծաւորը՝ ուրիշ ամբարիշանե-
րու պէս չարասէր լինելը հերիք չի սեղեր , հապա
կուղէ և կաշխատի որ բարի մարդ ըսուի ինքը ,
որով իրեն սնուած և կեղծ առաքինութեան ցոյցե-
րովը ամեն տեսակ դիմակ հաղնելու յանձնառու
կը լայ : Ռոպէ մի յառաջ ունեցած սկզբունքը՝
վայրկեանէ մի հաք կը փոխուի , և Գամելէն ը-
սուած զայնափոխ կենդանիին նման ինքն ալ միշտ
իւր միտքը և սկզբունքը փոխելը իրեն բնութիւն
ըրած է :

Օոր օրինակ գրամանենգ մի , որ սուտ դրամ-
ներ կը հնարէ , այնպէս ալ կեղծաւորը՝ առաքի-
նութիւն , հաւատարմութիւն , սէր , միութիւն ,
անկեղծութիւն կեղծելու մէջ վարպետ է և ճար-
պիկ : Այս է զարմանալին որ առանց պատկառելու
իւր միտեալ երեսը քած ձեռուըները ուրիշին
երեսը քսելով՝ զայն սկսրապ և սուտ տեղը կը
զսպարտէ : Եւ միշտ իւր վարպետառդի վարմունքո-
վը ուրիշները սիրել կը ձեռացընէ . իւր ունայնա-
սիրութեամբը և փառասիրութեամբը պատրաստ է
որ և իցէ նուիրական իրեր նաև առա տն կօխել՝ ա-
ռանց երբեք խեղջ մի ընելու : Այսպիսի անձի մը
սիրու թանալի կը լայ : շատերը իրեն կը քաշէ¹
անոնց միամտութեան օգնութեամբը , կը նմանի
ասիկայ ձկնորսի մը որ կերով կաշթ մի ծովը
նետելով՝ ինքունքը ձուկերուն կերպարիչ կերեցը-
նէ , բայց զանոնը բոնելով՝ անոնց մահուան
պատճառ կը լայ : Այսպիս այս տեսակ անձ մի
ինքնինքը բարերար և վեհանձն ցուցընելով՝ կու-
զէ հասարակութիւնը ձեռք անցընել , իրեն կեղ-
ծաւորութեան կարթերը ամեն տեսակ ընկերու-
թեանց մէջ նետելով :

Վանդաւոր է այսպիսի մարդը՝ որովհետեւ
ընկերութեանց մէջ՝ ընդհանրութեան շահին հա-
մար չի մտներ , հապա բոլոր մարդկային աղջը

խարելու և առաքինիները յանիրաւի զբովարժելու համար։ Ասիկայ շղցքորթ, հրապուրիչ և Ճարտար ձեւը զործածել զիտէ, զէշ կիներու պէս մարդկան բարի բնաւորութիւնները ապականելու համար։ “Եմանապէս վարպետ է իրեն դարձնել և զերի ընել բոլոր անոնք՝ որոնք միամաօրէն իրեն լարած թակարթը կիյնան։ Այսպիսի մարդը՝ մարդկային ընկերութեան ժանտախոր կըսուի։

“Այնապէս մատնութեան, բոնութեան և տութեան ձեռք կը զարնու կեղծաւորը, երբ ուրիշ կերպերուլ դլուխ չելնէ։ Դանիէլ մարդարէ իսրութիւնը և շնորհաց ողին իւր վրայ կրել կը ձեւացընէ։ Եւ ամեն աեսակ առաքինութիւն կը խոստանայ նա, բայց ինքը առաքինի չէ։ բոլոր մարդկային ընկերութիւնը կուղէ որ իւր ձեռքը խաղալիկ ըլլայ, և կը փափաքի ամենը իրեն քաշել և բոլոր հասարակութիւնը իրեն ծառայեցնել։

Յաւալի է արդարե այն անձին վիճակը՝ որ այս աեսակ մարդուն զերի եղած է և անոր սիրաը իբր անկեղծ կը հաւատայ։ Խնչպէս օձը, որ ծաւ զիկներու տակ կը սողոսկի, աւելի աչսելի է՝ քան զի վայրենի անսաւուն, որ մարդ տեսածին պէս՝ իւր որջը կը փախչի։ Պոյնալէս ալ կեղծաւոր մարդը՝ ամեն տեսակ զէշ մարդերէ վատանդաւոր է, որովհետեւ օձի պէս պահութելու իւր մեղածորան շրթունքներուն արտասանած խօսքերուն տակ՝ միշտ յարմար առթի կըսպասէ վատօրէն մարդուս միամութիւնը և անկեղծութիւնը խայլմելու։

Այս լինք, խորչինք այս աեսակ անձերէ, աշեկ քննելով անոնց սրտերը, խորչինք, հեռանանք, ինչպէս որ կուղենք հեռանալ և փախչի վեստ Արդիսներու պէս աղդամնենդ և աղդադրուժ մատնիչներու բնաւորութիւնը և հոգին ունենալը։

ՎԵՐԴԱՊԵՏԻ ՄՐ. ՀՅՅԵՍԵԿ

Մարդու մի կինը մոռնելով՝ կուղէ իւր քենին (Պալլա) իրեն կնութեան առնուլ. ուստի այս նախտակաւ կերթոյ վարդապետէն հրաման խնդրելու։ Իւր կամքը բացարեցն՝ վարդապետը իւր բոնելիք անպատճէ ընթացքին զէմ կը գնէ և առանկ բան չըլլար կըսէ։ Մարդը ցած ձայնով մի իւր բացի այդին կը խոստանայ։ Վարդապետը մերժելուն՝ իարդը չըլին, կը կրկնէ մարդը։ Վարդապետը նորէն չըլլար, կըսէ։ Հարիւր ֆլորն, կաւելցնէ մարդը։ Ասոր վրայ քիչ մի կանդ առնելով վարդապետը, կոկսի իւր ճակատը շփել և հետակաւ հրամանը տալ,

Դաշտի այդին,
կարմիր ջորին
Հարիւր ֆլորին.
թէ մեռնի կինն
Առու քենին։

ԱՌԵԲԲ ՀՈՒՍԵՒԹՈՐՉԵԱՆ ԲՆԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Այս այս անունով մարդասիրական ընկերութեան մի Յայտարարութիւնը կարդացինք այս օրերս, մեծ ուրախութեամբ տեսանք ոք Բրոպականապիգութորոցին Հայկացուն ազդասէր և մարդասէր աշակերտներէն ումանք այսպիսի գեղեցիկ դորձ մի յառաջ տանելու կը փութան։

Ասոնց նպատակը պիտի ըլլայ չքաւորները խնամել, ամենակարօտ աղքատները օդնել և կարու հիանդաց բժիշկ մատակարարել։

Այս ընկերութեան կանոնները Քաղաքական Ժողովայն ներկայացուելով՝ անոր հաւատութիւնը ընդունուած է։

Այս ընկերութիւնը՝ իւր բարեղ ործութիւնները գիւրութեամբ տարածելու համար, տարին քանի մի անդամ իւր ծախսով առնուած իրեր վիճակահանութեան պիտի հանէ։

Ընկերութեան Յարդի անդամներն են։
Գ. Գայսէրլեան, Առնեապէտ
Զ. Տիլզիրեան, Փամանորդ
Խ. Առլանեան, Գամյապէտ
Գ. Առլանեան, Փամանորդ
Ա. Պօնճայեան, Առենադպէտ։

Արգոյ խմբադիր.

Հետազայ տողերը բարեհաճիք ձեր հանդիսի միջոցաւ հրատարակել։

“Մեսրոպեան Վարժարանի թանդարանը քըննելով՝ ցանկէն շատ զբքեր պակաս դտանք, անոր բարեկարգ և յառաջադէմ ընթացքին համար կը ծանուցանեմք Օմբունիոյ բարեմիտ հասարակութեանը որ 1845 ին հրդէհէն ՚ի վեր ցիր ու ցանեղած և թէ այն միջոցէն ետե նոյն թանգարանէն կարդացուելու համար փոխ առնուած զբքերը, ուրու քուլ որ կը դանուի, բարեհաճիք վերադառնելու ինչպէս որ քանի մը ամփակ հետէ շատերը ձեռքերնին դանուած զբքերը բերին յանձնեցին։

Պանդարանի զբքերուն հարկաւորութիւն ու

Նեցողը՝ կրնայ ամեն օր առաւօտուն ժամը ջէն 10
և կէսօրէն ետքը ժամը 4էն մինչ 6 թանդարանը
դա, և իր ուզած զիբքը խնդրել և հոն կարգալ " "

O. J. — 2 fm 14 Sept 1862.

Սակամք Ուսումնական Խորհրդայ
Ստենագիւռ, Գ. Գ. Գոլտուղբեան.
Ստենագիւռ, Արեգան Յ. Տերեւեան.
Մ. Մ. Շվերտակիսեան.
Մ. Խուճիկեան.

Սէճմուայը Հավատիս Լրագրոյն Օմիւռնիոյ
Կործակալութիւնը, զօր Յովհաննէս աղա Արմու-
եանը կը վարէր, Մեծարդոյ Թագւոր աղա Ար-
շաղլեանի արծանաւոր որդի աղնիւ և աղզասէր
պարոն Ամրդիս . թ. Ավաղլեանին անցաւ : Ա-
պահով եմք որ վերսիցեալ Լրագրոյն Օմիւռնիոյ
բաժանորդաց թիւը կը կրկնապատկրէ, տրդի ար-
ժանայրագ զործակալին հոգատարութեամբը և իւր
Մեծապատիւ հօրը բազմաթիւ բարեկամաց տէր և
պատուասոր ըլլալով :

Յունիս 1 ուրբաթ կէսօրէն վլրջը Բրուսացի
Քոյրերուն (Soeurs Prussiennes) իղական սեռին
կրթութեան համար կանգնած Ռւսումնարանին մէջ՝
Հայերէն լեզուի քննութեան հերկայ դանուելու
բարեբաղդութիւնը ունեցանք : Այստեղ քանակ
երկու Արմէնուհիներ Հայերէն լեզուի մէջ քըն-
նուելով՝ իրենց պատուելի դասատուին, Յարդի-
պարոն Օ. Ստեփան Զարդըրեանին, իւրաքանչիւր
հարցմանց ըստ բաւականի յաջող պատասխաններ
տալով՝ ունկնդիրները որոնք իրենց մայրերը,
քոյրերը, Հայերէրը, եղասցրները և ազգականներն
էին ուրախացուեին :

Օարմանալին և ուրախալին այն է որ Հայոց
նախնի Պատմութեան մէջ Խիստ յաջող էին, թէ
և օտար գպրոցի մէջ . . . Այս բանս իրենց աղ-
գասէր դաստուին ջանից պտուղը կը սեպէնք:
Բայց գծբաղդաբար կը ցաւինք ըսելու որ՝ Աշ-
դային էի հնական դաստիարակութենէ զուրկ կը կը-
թեւին . . . :

Հետևեալին չբատարակութիւնը կը խնդրուի մեղմ:

"**Եռ Վ** ասպաւրական բնիերութիւն

Արեւ Հետ հաղիս ունինք ունանելիք, զրեցիք,
և չեմ ճանչնար, կ'ըսեմ. թէ որ ունանելիք հաղիս
ունիք. և բառ արակ եցեք: Ես, Ճեր
ընկերութեան որևէ իցէ Տաշուաց ամենեին պատաս-
խանաւու չեմ, թէ որ կ'ըսէք, որ եմ, պէտք է

ապացոյց, որ է, չ ը ա տ ա ր ա կ ու թ ի ւ ն
ա մ է ն ի ն շ բ ա ն ի ո ր ս տ ո ր ա դ ։

Եղմիք 4 Յաւնիս 1862

կ. Համեմատություն

EPIPHYSICAL

Oct-2nd, 1862.

Վի քանի դրամոց զիներն ու արժողութիւնը :

Փոխանակագրի ստակ.	Ծարիթայի ստակ	Չերիկի ստակ
Օսմ. լիրա .	72 · φլլ .	72 · φլլ .
Արք . մէջ .	445 $\frac{1}{4}$	423
Մահ . խոշ .	22 $\frac{34}{40}$	24 $\frac{1}{2}$
Երր քսան .	98 $\frac{1}{4}$	105
Անկը լիրա .	23 $\frac{30}{40}$	25 $\frac{1}{4}$
ՀՀ լին	125 $\frac{1}{2}$	134
20 ֆ . սակի .	6	6 $\frac{1}{2}$
Բ . կարէս .	99 $\frac{1}{2}$	106
Քարտ . խոշ .	104	107
" կատոր .	49	20 $\frac{1}{4}$
Բրմից	18 $\frac{32}{40}$	20
Մաջառ	38 $\frac{1}{4}$	62
Չեչէքլի	57 $\frac{1}{4}$	64
Տերէքլի	25	26 $\frac{1}{2}$
Մէտիլլան	26	27 $\frac{1}{2}$
Հրօւսիան	20 $\frac{13}{4}$	22
Վլանց	17 $\frac{32}{40}$	19
Ֆիորին	4	4 $\frac{1}{4}$
Հինդ խ 0/0	3	3 $\frac{1}{4}$
" մանր 0/0	4 $\frac{1}{2}$	41 $\frac{1}{2}$
Ա եցնց 0/0	3 $\frac{1}{2}$	10 $\frac{1}{2}$
	4	11

Փականական գրութեանց (Տաճախիալ) գիւելը,
Օսմանեան լըրան 115 $\frac{1}{4}$ հրաշելը:

1 սնտրա . 3 ամիս . 423 $\frac{1}{2}$, 423 .

Վարսիլիա 000 - 497.

Φρήσις 000 — 368.

ՀԵՐԱԳԻՐ-ՏԵՐԵՆ
ԳՐ. Պ. ՊԱՐՏԵԶՊԱՆԵԱՆ

ԶԱՐԴԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ